ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«---» սեպտեմբերի 2011թ. N------Ա

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 30.1-րդ կետով և «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով՝

Երևան քաղաքի ավագանին ***որոշում է.***

1. Երևան քաղաքում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներն իրականացնել գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով ընտրված օպերատորների միջոցով:

2. Հավանություն տալ Երևանի քաղաքապետարանի կողմից մրցակցային երկխոսության ընթացակարգով՝ «ԵՔ-ՄԵԾՁԲ-11/1» ծածկագրով աղբահանության և սանիտարական մաքրման /ներառյալ ձմռան ամիսներին/ ծառայությունների ձեռքբերման նպատակով նախաձեռնած գնման գործընթացին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է Երևան քաղաքում աղբահանության և սանիտարական մաքրման որակյալ ծառայությունների մատուցումն ապահովելու անհրաժեշտությամբ:

Երևան քաղաքում ներկայումս մատուցվող աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների արդյունքները գոհացուցիչ չեն, քանի որ այդ ծառայություններն առավելապես մատուցվում են Երևանի համայնքի ենթակայության կազմակերպությունների միջոցով, որոնք չունեն բավարար տեխնիկական հագեցվածություն և ֆինանսական անհրաժեշտ միջոցներ, մասնավորապես՝ գոյություն ունեցող աղբատար և սանիտարական մաքրման ավտոմեքենաների և այլ գույքի հիմնական մասը շահագործվում է դեռևս 1985-86 թվականներից, դրանք ունեն ֆիզիկական զգալի մաշվածություն, իսկ բավարար նյութատեխնիկական բազա ապահովելու համար անհրաժեշտ է շուրջ 10 մլրդ ՀՀ դրամի չափով ֆինանսական միջոցների ներդրում:

Երևան քաղաքում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների արդյունավետ կազմակերպման նպատակով առկա խնդիրների վերհանման և դրանց լուծման առաջարկներ ներկայացնելու, ինչպես նաև լավագույն միջազգային փորձը Երևան քաղաքում կիրառելու /ներդնելու/ համար Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ և վերջինիս կողմից հայտարարված մրցույթի արդյունքներով Հայաստանի Հանրապետության կառավարության (ի դեմս էկոնոմիկայի և ֆինանսների նախարարությունների) կողմից ներգրավվել են հանրաճանաչ խորհրդատուներ՝ «Fichtner GmbH & Co.KG» գերմանական ընկերությունը և «Integrated Skills Limited» անգլիական ընկերությունը:

Խորհրդատուների եզրակացությունների /հաշվետվությունների/ համաձայն՝ աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունները հնարավոր է կազմակերպել բարձր որակով, եթե Երևան քաղաքի տարածքում մրցութային կարգով ընտրվեն ոչ ավելի, քան 2 օպերատորներ և դրանց հետ կնքվեն 10 տարի ժամկետով պայմանագրեր, ինչը կապահովի ազատ մրցակցային և բարենպաստ ներդրումային դաշտ: Հաշվի առնելով, խնդրի հրատապությունը և կարևորությունը, ինչպես նաև միջազգային որոշ կազմակերպությունների հետաքրքրվածությունը, Երևանի քաղաքապետարանի կողմից գնումների մասին օրենսդրության համապատասխան՝ նախաձեռնվել է մրցակցային երկխոսության ընթացակարգով գնման գործընթաց: Նշված ընթացակարգն առաջարկվել է խորհրդատուի կողմից՝ ելնելով միջազգային փորձից:

Ելնելով վերը շարադրվածից և հաշվի առնելով, որ «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ համայնքի ավագանու որոշմամբ աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները համայնքի բյուջեի միջոցների հաշվին

իրականացնում են անմիջականորեն համայնքային հիմնարկները կամ համայնքի կարիքների համար գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով ընտրված օպերատորը, ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ <ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ> ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Որոշման նախագծի ընդունմամբ այլ իրավական ակտեր ընդունելու անհրաժեշտություն չկա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ <ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ> ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ